

**Եվրոպական խորհրդի նախագահ Հերման վան Ռոմպույի ելույթը
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում**

Մեծարգո՝ նախագահ,
Հարգելի՛ պատգամավորներ,
տիկնա՛յք և պարոնա՛յք,

Ինձ համար մեծ պատիվ և հաճույք է Երեւանում գտնվելը: Հայաստար մեծ ներդրում է ունեցել Եվրոպայի պատմության ու մշակույթի կերտման գործում. Ձեր երկրի ավանդը հայտնի է բոլոր եվրոպացիներին անկախ այն հանգամանքից, թե արդյոք նրանց հնարավորություն ընձեռվել է լինել Հայաստանում, թե ոչ: Համոզված եմ, որ մեզ մեծ ընդհանուր ապագա է սպասվում:

Անձամբ ես, միշտ հիացել եմ Ձեր երկրի հարուստ և ուշագրավ պատմությամբ: Որպես ամենահին քրիստոնյա ժողովուրդ, դուք ունեք աշխարհի ամենասքանչելի եկեղեցիներն ու վանքերը:

Ինձ համար մեծ պատիվ է ելույթ ունենալ ազգային ժողովում, որտեղ ներկայացված է հայ ժողովուրդն իր ողջ բազմազանությամբ:

Նախ շնորհակալ եմ այս հրավերի համար, թեև այս փուլում խորհրդարանում նստաշրջան չի ընթանում: Մեր հարաբերությունների ներկա փուլում շատ բարձր եմ գնահատում պատգամավորների հետ անմիջական շփման հնարավորությունը. Վստահեցնում եմ, որ այտեղ եմ նաև լսելու և տեղեկանալու համար:

Պարո՛ն նախագահ,

Հարկ է նշել, շատ պատեհ պահ է իմ ելույթի համար. Խորհրդարանը ստացել է բարեփոխումների իրականացման նոր մանդատ, ինչը շատ կարևոր է Հայաստանի և ողջ տարածաշրջանի համար: Բարեփոխումների հանձնառությունը, հիմնված մեզ համար ընդհանուր առանցքային արժեքների վրա, հանդիսանում է հույսի և փոփոխության կարևոր ազդակ: Հույսի և փոփոխության, որի համար դուք ունեք մեր լիարժեք աջակցությունը:

Պարո՛ն նախագահ,

Մեր կապերի խորացումը պայմանավորված է մեր արժեքներով և ձգտումներով: Եվրոպան Հայաստանին համարում է իր հինական գործընկեր՝ միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը ամրապնդելու, արդյունավետ միջազգային հարաբերություններ ծավալելու, ինչպես նաև ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի միջոցով վեճերը խաղաղ կարգավորելու:

գործում: Կցանկանայի ելույթս սկսել հենց այս գաղափարով, քանի որ մեր հավակնությունները Հայաստանի հետ հարաբերություններում իրագործելի են միայն, եթե հիմնված են խաղաղության, անվտանգության և կայունության վրա: Իրավիճակը տարածաշրջանում լուրջ մարտահրավերներ է թելադրում: Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումն այն բանալին է, որը կարող է բացել տարածաշրջանի զարգացման ահռելի ներուժն ու բերել բարեկեցություն:

Այս նպատակին հասնելու համար մեծ անելիքներ ունեն ոչ միայն քաղաքական գործիչները, այլ նաև հասարակությունը, որոնք պետք է համատեղ բարդ որոշումներ կայացնեն և միասին աշխատեն դիմադրելով պոպուլիստական հրետորիկային տրվելու և պառակտվելու գայթակղությանը:

Եվրոպայի ստեղծման հիմքում այն գաղափարն էր, որ մենք դադարեինք լինել մեր պատմության գերին, որ կարողանայինք հաղթահարել հակամարտության սպիներն ու աշխատել նախկին թշնամիների հետ համատեղ պայծառ ապագայի ստեղծման ուղղությամբ: Սկսեցինք փոքր և կառավարելի քայլերից. Առաջին իսկ քայլը այն էր, որ նախկին դիմադրող թշնամիները որոշեցին միացնել պատերազմի հիմնական բաղադրիչների՝ ածխի և պողպատի իրենց արտադրությունները: Որպես շարունակություն մայրցամաքի տնտեսություններն ու հասարակությունները ավելի մերձեցան: Դարեր շարունակ իրար դեմ կատաղի մարտնչող երկրները միավորվեցին միասնական դիրքերից հանդես գալու նպատակով:

Այդ ուղու ամեն փուլ լի էր յուրահատուկ մարտահրավերներով. Կան նաև դեռևս չհաղթահարված մարտահրավերներ, սակայն անհերքելի է, որ այս ուղին բերեց մեր մայրցամաքում խաղաղության և բարեկեցության հաստատմանը:

Պարո'ն նախագահ,

Եվրամիությունը նախևառաջ ընդհանուր արժեքների հանրություն է. Արժեքներ, որոնց համար արժե պայքարել, որոնք արժե որդեգրել: Հայաստանը մեր այն գործընկերն է, որը ցանկանում է որդեգրել այդ արժեքները: Առավել սերտ ասոցացումը, որի ուղղությամբ ներկայում աշխատանքներ են տարվում, ուղղակիորեն կապված է այդ հավակնությունների հետ: Այն կբարձրացնի մեր հարաբերությունները որակական նոր մակարդակի վրա՝ համագործակցության արդյունքներն ավելի տեսանելի դարձնելով քաղաքացիների առօրյա կյանքում:

Պարո'ն նախագահ,

Եվրոպայի միավորումը դյուրին չի եղել: Ճանապարհին բազմաթիվ դժվարություններ են եղել, որոնք մենք հաղթահարել ենք երկխոսության, փոխզիջումների և քաղաքական կամքի միջոցով: Հարկ է ընդունել, որ եմբեմն նաև սխալներ ենք թույլ տվել: Այժմյան տնտեսական և ֆինանսական ճգնաժամը եվրոպական ինտեգրման պատմության թերևս ամենալուրջ մարտահրավերն է: Սակայն, հաստատակամ և հաշվետու մոտեցում ցուցաբերելու դեպքում մենք ավելի կուժեղանանք: Դեռևս շատ անելիքներ կան, բայց մենք վճռական ենք, և պատրաստ ենք լավ հիմքեր դնել ապագայի համար:

Փորձում ենք լուծել Տնտեսական և դրամավարկային միության համակարգային խնդիրները, աշխատում ենք լիրժեք անվտանգ, ապահով, և կայուն համակարգ ապահովելու ուղղությամբ: Դասեր ենք քաղում ֆիսկալ կարգապահության, կառուցվածքային բարեփոխումների և խորացող ինտեգրման ոլորտներում: Բայց այս գործընթացը պահանջում է հաշվետվողական և թափանցիկ իրականացում:

Պարո'ն նախագահ,

Հայաստանը մտադիր է խորացնել իր հարաբերությունները Եվրամիության հետ, և դա ողջունելի է: Եվրոպական չափանիշների և նորմերի մոտարկումը Հայաստանի համար ռազմավարական ընտրություն է, և որպես այդպիսին հանդիսանալու է մեր նոր Համաձայնագրի հիմքը:

Վստահ եմ, որ մեր համարգործակցության հիմքերն ամուր են: Անցյալ տարի մեկնարկեց Եվրոպական միության վերանայված Հարևանության քաղաքականությունը, որի հստակ նպատակն է ավելի մեծ օժանդակություն տրամադրել այն գործընկերներին, որոնք աշխատում են խորը և կայուն ժողովրդավարություն կառուցելու ուղղությամբ, և ավելի արդյունավետ աջակցել ընդգրկուն տնտեսական զարգացմանը:

Դրա հատկանիշներից հիմնականը՝ «ավելին՝ ավելի դիմաց» սկզբունքը, ցանկանում եմ առանձնահատուկ շեշտադրմամբ առանձնացնել, վստահ լինելով, որ Հայաստանը կարող է շահել դրանից: Արևելյան գործընկերության հիմքում միջազգային իրավունքի և հիմնարար արժեքների համատեղ հանձնառությունն է, ներառյալ՝ ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգանքը, ինչպես նաև, շուկայական տնտեսությունը, կայուն զարգացումն ու ճշգրիտ կառավարումը: Որքան մեծ լինեն հավակնություններն ու ձեռքբերումները այս ոլորտներում այնքան կմեծանան ԵՄ ֆինանսական և տեխնիկական աջակցության ծավալները: Ավելին՝ ավելի դիմաց սկզբունքի համաձայն:

մեծարգո նախագահ,

Մեր հարաբերությունները որակական նոր մակարդակի բերելու համար կարիք չկա համագործակցության և օժանդակության նոր քաղաքականություններ կամ օրակարգեր մշակել: Մեր անելիքները, մեր ընդհանուր անելիքները, արդեն իսկ հստակ շարադրված են համաձայնագրերում ու գործիքներում: Ուրախ եմ, դրական են զարգանում որ Ասոցիացման համաձայնագրի և Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու շուրջ բանակցությունները: Նույնը վերաբերվում է նաև մուտքի արտոնագրերի դյուրացման բանակցություններին:

Քաղաքական արժանի ճանաչում ձեռք բերելու համար մեր համատեղ աշխատանքը պահանջում է ջանք, համբերություն և հանձնառություն: Մեզ ջատագովներ են անհրաժեշտ, որոնց հույս ունեմ գտնել այս սրահում: Բարեփոխումներն առաջ տանելու գործում լուրջ դեր ունեն նաև քաղաքացիներն ու քաղաքացիական հասարակության կառույցները, ՀԿ-ները, արհմիություններն ու լրատվամիջոցները:

Պարո՞ն նախագահ,

Թույլ տվեք հակիրճ ներկայացնել մեր ընդհանուր ճանապարհը բնութագրող որոշ դիտարկումներ, որոնք առաջացան Հայաստանի ներքին զարգացումների և մեր երկկող հարաբերությունների առաջընթացի մասին վերջին զեկույցներն ուսումնասիրելու արդյունքում:

Առաջին դիտարկումը վերաբերվում է ժողովրդավարության: Ուրախ եմ, որ մայիսի 6-ի ընտրությունների անցկացումը ազդարարեց առաջընթաց ընտրական համակարգն առավել թափանցիկ և մրցակցային դարձնելու ուղղությամբ:

Սա կարևոր քայլ էր, և ես կոչ եմ անում Հայաստանին շարունակել նույն տեմպերով, դեպի ժողովրդավար կառույցների ամրապնդում, թափանցիկության խթանում, մարդու իրավունքների պաշտպանություն ու օրենքի գերակայության ապահովում: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ մի շարք խնդիրներ դեռ լուծման կարիք ունեն ընտրական համարգի հետագա բարելավումն ապահովելու համար: ԵԱՀԿ/ԺՀՄԻԿ դիտորդական առաքելության Եզրափակիչ հաշվետվությունը պարունակում է դիտորդների կատարած արժեքավոր գործունեության արդյունքները: Վստահ եմ, որ նրանում նշված խնդիրները հնարավոր է լուծել նախքան մյուս տարի կայանալիք նախագահական ընտրությունները:

Երկրորդ դիտարկումն առավել ընդհանրական բնույթի է: Այն այսպես կոչված «առանցքային բարեփոխումների» մասին է: Դա այն բարեփոխումներն են, որոնց իրականացումն անհրաժեշտ է մեր քաղաքական ասոցացման կայացման համար: Եվրամիությունը ողջունում է Հայաստանի ջանքերը բարեփոխումների ուղղությամբ և մարդու

իրավունքների ու օրենքի գերակայության ոլորտներում գրանցած առաջընթացը: Սակայն, դեռևս կարևոր ոլորտներ, ինչպիսիք են խոսքի և մամուլի ազատությունը, հեռարձակող մամուլը, խղճի ազատությունն ու խտրականության վերացումը, որոնք պահանջում են բարելավում: Մենք միանշանակ կարիք ունենք վերանայելու բարեփոխումների առաջնահերթությունները, արդարադատության, մարդու իրավունքների, մամուլի ազատության և միջուկային էներգետիկայի ոլորտներում:

Պարո՞ն նախագահ,

Լիահույս եմ, որ Հայաստանը շարունակելու է իրական բարեփոխումների իրականացման կարևորումը: Կարող եք ապավինել մեր աջակցությանը և այսօրվա մեր հանդիպման պատճառներից մեկն էլ հենց այն է, որ ցույց տանք, որ մեր հանձնառությունը իրական է և կայուն: «Ավելին՝ ավելիի դիմաց» սկզբունքի համաձայն, մենք կավելացնենք մեր աջակցությունը, եթե Հայաստանը շարունակի իր գործունեությունը ճիշտ ուղղությամբ:

Եզրափակելով խոսքս՝ անդրադառնամ տարածաշրջանային համատեքստին: Արեւելյան գործընկերության օգուտները հնարավոր չէ լիարժեքորեն քաղել, եթե չլինի կայունություն. կայունություն հարեւանների միջեւ հարաբերություններում՝ ե՛ւ միջնաժամկետ, ե՛ւ հեռանկարային նպատակների իրագործմամբ: Գործը առաջ չի գնա, եթե շարունակաբար հակամարտության սպառնալիք լինի տարածաշրջանում, բայց թույլ տվեք նշել, սա է իրականությունը, եւ այս իրականության հետ ինչ-որ բան պետք է անել: Եվրամիությունը կշարունակի պնդել, որ Հայաստանը եւ Ադրբեջանը ավելացնեն իրենց ջանքերը՝ ընդհանուր համաձայնության գալու ուղղությամբ: Մադրիդյան սկզբունքները շարունակում են արժեքավոր հիմք ծառայել խաղաղություն հաստատելու համար՝ համաձայն այն հանձնառությունների, որ ստնաձնել են երկու երկրների նախագահները Ֆրանսիայի, Ռուսաստանի եւ ԱՄՆ—ի, այսինքն՝ Մինսկի խմբի համանախագահների առջեւ: Եվ մենք կշարունակենք հայցել առանց որեւէ նախապայմանների ազատ մատույցները դեպի Լեռնային Ղարաբաղ եւ շրջապատող տարածքներ Եվրամիության համար:

Պարո՞ն նախագահ,

Շատ մեծ մտահոգությամբ տեղեկացա վերջերս Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանի վրա տեղի ունեցած լուրջ միջադեպերի մասին: Եվ այս ողբերգական իրադարձությունները տեղի են ունեցել, եւ դրանց հետ կապված հնարավոր չէ որեւէ բան անել: Միեւնույն ժամանակ հարկ է խոսել սրանց մասին, հրապարակավ խոսել, որպեսզի չզարգանան դրանք, չստանան բացասական ու անցանկալի զարգացումներ: Մինսկի խմբի համանախագահները եւ նրանց ջանքերը՝ ուղղված խաղաղ կարգավորմանը, ունեն մեր լիակատար աջակցությունը: Եւ մենք կարող ենք

լրացուցիչ աջակցություն տրամադրել վստահության կայացմանն ուղղված միջոցառումների տեսքով: Եվ երբ հաստատվի խաղաղություն, կօգնենք վերականգնողական աշխատանքում:

Երկու բառով անդրադառնամ Հայաստան—Թուրքիա հարաբերություններին: Ակնհայտորեն այս հարաբերությունները շատ մեծ նախապատմություն եւ պատմություն ունեն, ես այդ պատմությունից քաջատեղյակ եմ: ԵՄ—ն շարունակում է հորդորել երկու կողմերին էլ շարունակել նվիրում ցուցաբերել հարաբերությունների երկկողմանի կարգավորմանը՝ առանց որեւէ նախապայմանի: Համոզված եմ, որ այս հարաբերությունների նորմալացումը մեր ընդհանուր հարեւանի ու ԵՄ թեկնածուի հետ շատ դրական նպաստ կբերի խաղաղության, կայունության եւ համագործակցության զարգացման ուղղությամբ Հարավային Կովկասում:

Պարո՛ն նախագահ,
Հարգարժա՛ն պատգամավորներ,

Բարեկեցության ճանապարհը, կայուն զարգացման եւ անվտանգության ճանապարհը իրական բարեփոխումների ու ժողովրդավարության, խաղաղության ճանապարհ է, եւ տարածաշրջանային հակամարտության կարգավորման առաջընթացը դրական ազդեցություն կունենա Հայաստանի աճի, ներդրումային ներուժի վրա, նպաստավոր կլինի նաեւ տարածաշրջանի համար եւ թույլ կտա այս երկրին վայելել բարեփոխումների պտուղները: Սրա համար պետք է վստահություն, առանց վստահության չի լինի խաղաղություն, իսկ վստահությունը կախված կլինի երկու կողմերի առաջնահերթություններից, փոխզիջումների գնալու պատրաստակամությունից: Յուրաքանչյուր փոքր քայլ այս ուղղությամբ կմոտեցնի կայուն եւ բարգավաճ ապագան ամբողջ այս տարածաշրջանում, մի բան, որին արժանի են այս տարածաշրջանի քաղաքացիները: Պարոն նախագահ, համոզված եմ, որ Ձեր վճռականությունը եւ այս խորհրդարանի վճռականությունը կարող են ճանապարհ հարթել դեպի ավելի պայծառ ապագա: Հայաստանի քաղաքացիները՝ ձեր օգտին իրենց քվեները տված կանայք եւ տղամարդիկ, ձեզանից ավելի քիչ բան չեն կարող ակնկալել»: